

ՔԱՐՈՉ ԽՈՍՎԱԿԱՆ

S. ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ

(25 օգոստոսի 2002 թ.)

«Յանուն Հօր և Որդոյ և Շոգոյն Սրբոյ. ամէն»:

Միջակ հավաքացյալ ժողովուրդ.

Այսօր Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնի 8-րդ օրն է: Տիրամայրը մեծ փեղ է գրավում ամեն մի հավաքացյալ կյանքում, որովհետո Ամենասրբուի Կույսը մեծ նշանակություն է ունեցել ընդհանրապես քրիստոնեության փարածման գործում ոչ միայն այն բանի համար, որ նրա միջոցով է Աստծո Միածին Որդին՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոս, աշխարհ եկել, այլ նաև այն առաջնորդության համար, որ կարարել է մեր Տիրոջ մայրը Քրիստոսի համբարձումից հետո: Երբ Քրիստոս խաչվեց, հարություն առավ և համբարձվեց, Նրա աշակերպները հաճախ էին հավաքվում Աստվածածնի մոլոր, որպեսզի իրենց Տիրոջ կարուղը նրանից առնեն: Եվ երբ առաջյալները սկսեցին իրենց քարոզության առաջին քայլերն անել և Քրիստոսի ուսմունքը դարձել ամբողջ աշխարհով մեկ, նրանց մեջ փարբեր կարծիքներ և փարբեր խմբավորումներ առաջացան:

Առաջյալների մի մեծ խումբ, Պետրոս առաջյալի զիսավորությամբ, հիմնականում պահանջում էր, որ նոր քրիստոնյաները պահպաննեն իրեական բոլոր ստվորությունները, ինչպես, օրինակ, թաղաքությունը և հիմնականում նրանք իրենց քարոզությունը կենդրուածնում էին այն երկրներում, որպես որ իրեական համայնքներ կային, և իրենց քարոզությունը հիմնականում ուղղված էր նրանց:

Առաջյալների մեկ այլ խումբ, սակայն, Պողոս առաջյալի զիսավորությամբ, ավելացր էր համարում իրեական ծիսական սովորությունների պահպանությունը նորադարձ քրիստոնայների համար, որովհետո նրանք իրենց քարոզությունը հիմնականում ուղղել էին հեթանոսներին և չին ցանկանում իրեական ծիսական արարողություններով վանել նրանց, որովհետո առաջյալների հիմնական նպատակն էր հեթանոսներին դարձնել Աստծո նոր ժողովուրդը:

Ինչպես Տիրամոր Վերափոխման պարմությունում է պատրմում, Ամենասրբուի Կույսի երկրային կյանքի ավարտին Աստվածածնի սնարի առջև սակայն երբ հանդիպում են Պետրոս և Պողոս առաջյալները՝ նրանք հաշվում են միմյանց հետ, ողջագործում և որոշում են հետքայու միաձայն ու միասիրդ քարոզել քրիստոնեությունը անխպիր և հեթանոսների, և հեթանոսների համար:

Այսպիսով, մի քանի դարերի ընթացքում հասպատվում է Քրիստոսի Եկեղեցին իբրև մեկ մարմին՝ ունենալով մեկ գոլոս, որ Հիսուս Քրիստոսն է: Ժեպետու փարբեր ժողովուրդներ, փարբեր լեզուներով խոսող երկրներ դարձան քրիստոնյա և իրենց դեղական Եկեղեցիները ունեցան, սակայն քացահայք էր այս բոլոր Եկեղեցիների միությունը, որովհետո նրանք ունեին նոյն հավաքքը և դավանում էին նոյն Քրիստոսին ու ձգում էին նոյն փրկությանը:

12-րդ դարի վերջերին, 1179 թ., հեռավոր Կիլիկիայում Հայ Եկեղեցու Գերագոյն ժողովն էր գումարվել՝ քննելու այն հարցը, թե ինչպես կարող է Հայ Եկեղեցին զիշտումներ կարարել կամ ոչ՝ ի խնդիր ընդհանուր քրիստոնեական միության: Այդ ժողովի ժամանակ աղբենարանությամբ հանդիս է զայխ Հայ Եկեղեցու մեծագոյն ասպրանական քրիստոնեական աշխարհի մեծագոյն Եկումենիապրեներից մեկը՝ Ներսես Լամբրոնացին, հիշեցնելով, որ Եկեղեցին մեկ էր առաջին հինգ դարերի ընթացքում: Սարդարն կարողացավ, սակայն, որում սերմանել, և 5-րդ դարից սկսած Եկեղեցին գրոհվեց ու բաժանվեց մի քանի ճյուղերի, և մեր՝ քրիստոնյաներին պարունակությունը է հայթել սարդարներին և վերականգնել Եկեղեցու միությունը:

Դժբախտաբար Սուրբ Ներսես Լամբրոնացու այս մրածումները գրարածում ընդգուան քրիստոնյա աշխարհում, և բաժանումները շարունակվեցին: Նախ բաժանվեցին Օրթոդոքս և Կաթոլիկ աշխարհը, այսուհետև բաժանվեց և Բռողքական աշխարհը, և 18-19-րդ դր. մենք մի այնպիսի քրիստոնյա աշխարհի առջև էինք կանգնած, որ դարբեր դավանությունների քրիստոնյաներ չէին ցանկանում միմյանց բարեւել, չէին ցանկանում միմյանց հետ սեղան նսդել:

Փառք Ասպծո, սակայն 20-րդ դարը նշանավորվեց քրիստոնեական Եկեղեցիների միջև սիրո և միության անհրաժեշտության գաղափարների հայթանակով: Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, ինչպես նաև գրաբեր գրեղական, Եկեղեցական միությունների, Եվլուպայում Եկեղեցիների Եվլուպական Կոնֆերանսի, Ամերիկայի Միացյալ Նահանգներում Եկեղեցիների Ազգային Խորհրդի և այլ կազմակերպությունների գրքնաշան աշխարհանքի շնորհիվ Վերականգնվեց սերը քրիստոնեական Եկեղեցիների միջև: Եվ այժմ մենք ընթանում ենք այն ճանապարհով, որը առաջնորդում է մեզ դեպի մեկ Քրիստոս, դեպի մեկ Եկեղեցի:

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը նշում է 20-րդ դարի երջանկահիշարժակ Հայրապետության՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ի ծննդյան 70-ամյակը: Հոգեկույուն Հայրապետը մի կարճ ժամանակ բազմեց Լուսավորչի գահին, 18 դարի Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոսության Աթոռի գահակալը լինելուց հետո: Ընդամենը չորս դարի եղավ նրա կաթողիկոսության շրջանը, մի փոքրիկ ժամանակաշրջան, որը, սակայն, բավական էր, որպեսզի նա կարողանար իր շոնչը հաղորդել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Այդ կարճ ժամանակաշրջաքը մերանաշնորհ Հայրապետը վերակազմեց Հայաստանի և Խորհրդային Սփյուռքի դարաձրում գործող Հայ Եկեղեցին՝ հինգ թեմների կողքին սպեղծելով ևս վեց թեմեր՝ նրանց քանակը հասցնելով 11-ի, Հայաստանում չորս նոր թեմեր սպեղծելով, իսկ Հարավային Ռուսաստանում ու Ուկրաինայում ևս երկուսը՝ նրանց համար ձեռնադրելով առաջնորդ եպիսկոպոսներ և նաև ներշնչելով նրանց հավաքը իրենց ուժերի և կարողությունների նկարմամբ և ոգեշնչելով, որպեսզի այդ առաջնորդները կարողանան կազմակերպել իրենց հանձնված նորասպեսջ թեմները:

Երջանկահիշարժակ Հայրապետը զարկ փուլու դարբարական գործունեությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, և հարյուրավոր գործեր երաժշտական այդ դժվարին չորս դարի նորիների ընթացքում: Սակայն այն դաշտը, որին Գարեգին Ա Կա-

թողիկոսը մնձ նպաստ բերեց Սուրբ Էջմիածնին և Հայոց Առաքելական Եկեղեցուն, դա Եկումննիկ շարժումն էր: Լինելով 20-րդ դարի մեծագույն առաջնորդներից մենքը Եկեղեցիների միության և Եկումննիկ շարժման, նա կարողացավ մի ասդիճան ևս բարձրացնել Հայ Եկեղեցու նշանակությունը և հեղինակությունը համաշխարհային Եկեղեցական շրջանակում, և պատահական չէ, որ 1997 թ. Ավստրիայի Գրաց քաղաքում գումարված Եվրոպայի Երկրորդ Եկումննիկ համագումարի հիմնական խոսքը առաջարկվեց Գարեգին Ա երշանկահիշափակ Հայրապետին:

Նա պաշտոնական այցելություններ տվեց գլխավոր Եկեղեցիներին և նրանց պետքին, ինչպես Ռուս Եկեղեցուն, Վրաց Եկեղեցուն, Հույն Տիեզերական Պատրիարքությանը, Ռում Վարդիկան, Քենտրոնական Արքեպիսկոպոսին և այլ կարևոր Եկեղեցական կենտրոններ: Եվ այդ այցելություններն անպարասխան չմնացին, որովհետո իմ թվարկած բոլոր Եկեղեցիների գահակաները փոխադարձ այցելություններ տվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Այսօր, զեղեցիկ մի զուգաղիպությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում է գտնվում ԱՄՆ-ի Եկեղեցիների Ազգային Խորհրդի պարվիրակությունը՝ գլխավորությամբ գլխավոր քարտուղար Վերապապվելի դրկոր Ռոբերտ Էնգարի: Պատրվիրակության մեջ մենք ներկայացուցիչներ ենք դեսնում նաև Լյութերական Եկեղեցուց, Անգլիկան Եկեղեցուց, Բողոքական դարձեր հարանվանություններից, և, որ ուրախալին է, այդ պարվիրակության մաս է կազմում նաև ԱՄՆ-ի Հռոմեա-Կաթոլիկ Եկեղեցին՝ իր ներկայացուցիչներով:

ԱՄՆ-ի Եկեղեցիների Ազգային Խորհրդը միավորում է այդ երկրում գործող 36 դարձեր հարանվանությունների Եկեղեցիներ, և եթե հաշվի առնենք, որ այդ պարվիրակությանը մասնակցում է նաև Կաթոլիկ Եկեղեցին, ապա ավելի քան 200,000,000 քրիստոնյաների ներկայացնող մի պարվիրակություն է, որ այցելել է այսպես՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի: Այս Խորհրդը նույնական է, որ անցյալ դարի Վաշինգտոնում կազմակերպեց Հայ Եկեղեցու 1700-ամյա հորեւյանը, որին ներկա գրնվեց նաև Ն. U. O. S. S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այս Խորհրդը նույնական է, որ իր բողոքի ձայնը բարձրացրեց վերջերս Խորայելի կառավարության կողմից հայկական հողերի, հարկացնելու «Պարոն Տեր» կալվածքի նկազմամբ ձեռնարկված ուժնագությունների համար: Ես հանուն Վեհափառ Հայրապետի և հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և հանուն մեր հայ հավաքացյալ ժողովրդի սիրով ողջունում եմ ներկայությունը մեր պարվարժան հյուրերի: Նրանք խաղաղություն են քարոզում իրենց երկրում, նրանք խաղաղությունը քարոզում են նաև իրենց երկրից դուրս՝ ամբողջ աշխարհով մեկ, և այդ խաղաղության ոգին է, որ իրենց հետ բերել են այսպես և ուզում են միացնել իրենց ձայնը և իրենց ողջունը հաղորդել Հայ Եկեղեցուն և մեզ բոլորիս, սիրելի հավաքացյալներ:

Թող Ասպարագություն շնորհի և՛ մեր պարվիրակներին, և՛ այն կազմակերպությանը, որ իրենք ունեավարում են, և՛ այն Եկեղեցիներին, որոնք իրենք ներկայացնում են: Թող Ասպարագությունը իր հովանին անպակաս անի ամբողջ քրիստոնյա աշխարհի վրա, ի մասնավորի մեր Հայրենիքին, որ այժմ մենք գրնվում ենք և որ մենք աղոթքներն ենք բարձրացնում առ Ասպարագության ամեն: